

ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ

Գնահատման և վավերացման գործընթացների պաշտոնական արդյունք (դիպլոմ, հավաստագիր և այլն), սրացված իրավասառու մարմնի որոշման հիման վրա, առ այն, որ անձը ձեռք է բերել սահմանված չափորոշիչներին համապատասխան կրթական վերջնարդյունքներ:

Որակավորումների ազգային շրջանակի համարեքստում այդպիսի չափորոշիչներ են մակարդակների նկարագրիչները:

ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակը ներառում է 3 մակարդակ, որոնցից յուրաքանչյուրի համար տրվում է գիտելիքի, կարողությունների և հմտությունների անհրաժեշտ լրակազմը:

ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

ԲԱԿԱԼԱՎՐ (180-240 կրեդիտ)

Բակալավրի որակավորում է շնորհվում անձանց, ովքեր ունեն համակողմանի և համակարգված գիտելիք և կարողություններ մի շարք ոլորտներում մասնագիտական աշխատանք կատարելու և (կամ) ուսումնառությունը շարունակելու համար:

ՄԱԳԻՍՏՐՈՍ (60-120 կրեդիտ)

Մագիստրոսի որակավորում է շնորհվում անձանց, ովքեր ունեն ոլորտի խոր մասնագիտացված գիտելիք և կարողություններ մասնագիտական գործունեություն և հետազոտություն իրականացնելու և (կամ) ուսումնառությունը շարունակելու համար:

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ (180 կրեդիտ)

Գիտությունների թեկնածուի որակավորում է շնորհվում անձանց, ովքեր ունեն խոր և համալիր գիտելիք ու հատուկ հետազոտական կարողություններ գիտության կամ մասնագիտական գործունեության մեկ կամ մի քանի փոխհատվող ոլորտներում գիտելիքն ընդլայնելու և/կամ նոր գիտելիք ստեղծելու համար:



ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՉԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ Համառոտ ուղեցույց բուհերի համար



3-րդ մակարդակ՝ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ

2-րդ մակարդակ՝ ՄԱԳԻՍՏՐՈՍ

1-ին մակարդակ՝ ԲԱԿԱԼԱՎՐ

ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ (ՈԱՇ)

Կրթական տարբեր մակարդակների համար սահմանված նկարագրիչներին համապատասխան որակավորումների դասակարգման գործիք, որի նպատակն է փոխկապակցել ազգային որակավորումները և համապատասխանեցնել աշխատաշուկայի և հասարակության պահանջներին՝ դրանք դարձնելով թափանցիկ և հասկանալի:

ՈԱՇ-Ի ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐ

Կրթական ձեռքբերումների հարաբերական բարդությունը և/կամ խորությունը, ինչպես նաև այդ ձեռքբերումների դրսևորման, կիրարկման կամ օգտագործման համար պահանջվող ինքնուրույնության աստիճանը բնորոշող մակարդակներ, որոնց համաձայն դասակարգվում են կրթական որակավորումները:

« ՈԱՇ-ը բաղկացած է ութ մակարդակներից, որոնցից ամենաբարդը ութերորդն է:

ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՆԿԱՐԱԳՐԻՉՆԵՐ

Ձևակերպումների լրակազմ, որը նկարագրում է ՈԱՇ-ում ներառված յուրաքանչյուր որակավորման շնորհման համար պահանջվող կրթական վերջնարդյունքները՝ արտահայտված գիտելիքի, կարողությունների և հմտությունների եզրույթներով:

ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԱՇ-Ի ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ԵՆ՝

- ➔ Ցուրաքանչյուր կրթական մակարդակի համար սահմանել գիտելիքի, կարողությունների և հմտությունների անհրաժեշտ լրակազմը, որը կհամապատասխանի հասարակության և աշխատաշուկայի պահանջներին, ինչպես նաև կնպաստի որակավորումների նկատմամբ վստահության ամրապնդմանը:
- ➔ Նպաստել որակավորումների մի մակարդակից մյուսին անցման դյուրացմանը:
- ➔ Օգնել բուհերին՝ մշակելու աշխատաշուկայի ժամանակակից պահանջներին համապատասխան կրթական ծրագրեր:
- ➔ Նպաստել անհատների ցկյանս ուսումնառությանը:
- ➔ Նպաստել կրթության որակի ապահովման և բարելավման գործընթացներին:
- ➔ Աջակցել շրջանավարտների միջազգային շարժունությանը՝ որակավորումների համադրելիության և թափանցիկության բարձրացման միջոցով:
- ➔ Ապահովել միջազգային որակավորումների հետ փոխկապակցումը:

ԻՆՉՊԵՍ ՀԱՄԱԴՐԵԼ ԲՈՒՀԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՈԱՇ-Ի ՀԵՏ

(օրինակի դիտարկում)

Կրթական ծրագրի վերջնարդյունքները (Բակլավր)	ՈԱՇ-ի նկարագրիչները (1-ին մակարդակ – Բակլավր)
<p>Մասնագիտական գիտելիք և իմացություն</p> <p>Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.</p> <ul style="list-style-type: none"> ● Ա1 → ● Ա2 → ● Ա3 → ● Ա4 → ● Ա5 → 	<p>Գիտելիք և իմացություն</p> <ul style="list-style-type: none"> • Դրսևորում է մասնագիտական աշխատանքի կամ ուսումնառության ոլորտի արդի և հիմնարար հասկացությունների, տեսությունների ու մեթոդների իմացություն և առաջադեմ գիտելիք:
<p>Գործնական մասնագիտական կարողություններ</p> <p>Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.</p> <ul style="list-style-type: none"> ● Բ1 → ● Բ2 → ● Բ3 → 	<p>Գիտելիքի և իմացության կիրառումը</p> <ul style="list-style-type: none"> • Կարող է կիրառել ՏՀՏ-ներ մասնագիտական ոլորտում խնդիրներ լուծելու և աշխատանքն արագացնելու համար:
<p>Ընդհանրական կարողություններ</p> <p>Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.</p> <ul style="list-style-type: none"> ● Գ1 → ● Գ2 → ● Գ3 → 	<p>Ինքնուրույնություն և պատասխանատվություն</p> <ul style="list-style-type: none"> • Կարող է ղեկավարել աշխատանքային թիմ և պատասխանատվություն ստանձնել նրա անդամների մասնագիտական գործունեության համար: